ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 մայիսի 2023 թվականի N 771-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 10-Ի N 1136-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 10-ի «Ցեմենտներին, պորտլանդցեմենտային կլինկերին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 1136-Ն որոշման՝

1) վերնագրում և որոշման 1-ին կետով հաստատված հավելվածում «պորտլանդցեմենտային կլինկեր» բառերը և դրանց համապատասխան հոլովաձևերը փոխարինել «ցեմենտային կլինկեր» բառերով և դրանց համապատասխան հոլովաձևերով.

2) 1-ին կետով հաստատված հավելվածի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1. Ցեմենտներին, ցեմենտային կլինկերին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի (այսուհետ՝ տեխնիկական կանոնակարգ) գործողությունը տարածվում է հետևյալ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային ծածկագրերից պորտլանդցեմենտի, կավահողային ցեմենտի, խարամային ցեմենտի,

սուպերսուլֆատային և նույնանման հիդրավլիկ ցեմենտների, չներկած կամ ներկած, պատրաստի կամ թրծած բովախառնուրդների (կլինկերների) վրա (այսուհետ՝ ցեմենտներ, ցեմենտային կլինկեր)՝

1.	2523 10 000 0	կլինկերային ցեմենտ
2.	2523 21 000 0	պորտլանդցեմենտ՝ սպիտակ ցեմենտ, արհեստականորեն ներկված կամ չներկված
3.	2523 29 000 0	այլ
4.	2523 30 000 0	կավահողային ցեմենտ
5.	2523 90 000 0	այլ հիդրավլիկ ցեմենտներ

».

3) 3-րդ բաժնի վերնագրում «ՇՈՒԿԱ ՄՈՒՏՔ ԳՈՐԾԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ» բառերը փոխարինել «ՇՈՒԿԱՅԱՀԱՆՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ» բառերով.

4) 5-րդ կետը «պորտլանդցեմենտային կլինկերի» բառերից հետո լրացնել «արտադրությունը, փոխադրումը և» բառերով.

5) N 2 աղյուսակը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Աղյուսակ N 2

Ամրության դասը	**Ծոման ամրությունը, ՄՊա/ ոչ պակաս (28 օր հասունացմամբ)**	**Սեղմման ամրությունը, ՄՊա, օր հասունացմամբ**				**Կապակցումը**			**Ծավալի փոփոխման հավասարաչափությունը (ընդարձակում), մմ, ոչ ավելի**
		վաղ ամրություն		**ստանդարտ ամրություն**		**սկիզբը, րոպե, ոչ շուտ**	**սկիզբը, րոպե, ոչ ուշ**	**վերջը, ժամ, ոչ ուշ**	
		2 օրական, հասունացում, ոչ պակաս	**7 օրական հասունացում, ոչ պակաս**	**28 օրական հասունացում**					
				ոչ պակաս	**ոչ ավելի**				
1	2	3	4	5	6	7	8	9	10
22.5N	-	-	11.0	22.5	42.5	45	-	10	10
32.5N	5.5	-	16.0	32.5	52.5	45	-	10	
32.5R	5.5	10.0	-			-	45	10	
42.5N	6.0	10.0	-	42.5	62.5	45	-	10	
42.5R	6.0	20.0	-			-	45	10	
52.5N	6.5	20.0	-	52.5	-	45	-	10	
52.5R	6.5	30.0	-			-	45	10	

Ցեմենտի աղացվածքի մանրությունը N 008 մաղի վրայի մնացորդը	ոչ ավելի, քան 15 %		
Ցեմենտներում տեսակարար մակերեսը՝ համաձայն Բլեյնի մեթոդի	ոչ պակաս, քան 2800 սմ²/գ և ոչ ավելի, քան 4000 սմ²/գ		».

6) 15-րդ կետում «ԳOUS 31108-2003» բառերը փոխարինել «ԳOUS 31108» բառերով.

7) 17-րդ կետում «և պահման» բառերը փոխարինել «, իրացման և պահման» բառերով.

8) 30-33-րդ և 35-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել.

9) 39-րդ կետը «և այլ» բառերից առաջ լրացնել «օրենքներով» բառով.

10) 11-րդ բաժնում տեխնիկական կանոնակարգով սահմանված պահանջ-ների կատարումն ապահովող ստանդարտների ցանկը լրացնել հետևյալ բառերով՝

«	ԳOUS 30515	Ցեմենտներ. Ընդհանուր տեխնիկական պայմաններ
	ԳOUS 31108	Ցեմենտներ համաշինարարական. Տեխնիկական պայմաններ »

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 180-րդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

18.05.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ